ԿԱՐԾԻՔ
պաշտոնական ընդդիմախոսի

Մարգարիտ Արթուրի Տիգանյանի «Հայաստանի Հանրապետության թրիփսների (Insecta, Thysanoptera) ֆաունան և էկոլոգիական առանձնահատկությունները» թեմայով Գ 00.08 - «Կենդանաբանություն. Մակաբուծաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Թրիպսները (Insecta: Thysanoptera) միջատների կարգ է, որը ներառում է շուրջ 6600 տեսակ և կարևոր դեր ունի ցամաքային էկոհամակարգերում որպես փոշոտողներ, ֆիտոֆագեր, միցետոֆագեր և գիշատիչներ: Որոշ ֆիտոֆագ տեսակներ ունեն կարևոր տնտեսական նշանակություն՝ վնասում են մշակաբույսերը և փոխանցում բույսերի հիվանդություններ՝ մասնավորապես վիրուսային:

Հայաստանի լեռնային ռելիեֆի և բնակլիմայական պայմանների բազմազանությունը նպաստում է հարուստ կենսաբազմազանության ձևավորմանը: Սակայն Հայաստանի թրիպսների ֆաունան մինչ օրս բավարար չի ուսումնասիրված: Հայտնի են հիմնականում գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատու տեսակների վերաբերյալ տվյալներ: Ուստի Հայաստանի թրիպսների ֆաունան ունի ուսումնասիրության անհրաժեշտություն:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսության նպատակն է համակողմանի ուսումնասիրել ՀՀ թրիպսների ֆաունան՝ տաքսոնոմիան, տեսակային կազմը, տարածվածությունն ու գոտիական բաշխվածությունը, ձևաբանական և էկոլոգիական առանձնահատկությունները: Յեղինակը հատուկ ուշադրություն է դարձվում ՀՀ կարանտինային վնասատու՝ արևմտյան ծաղկային թրիպսի (*Frankliniella occidentalis* Pergande, 1895) ուսումնասիրությանը, և գենետիկական առանձնահատկությունների ու կապերի պարզաբանման նպատակով կիրառում է ժամանակակից մոլեկուլային մեթոդները:

Գիտական նորույթը

Առաջին անգամ համակարգված կերպով ուսումնասիրվել և ամբողջացվել է Հայաստանի Հանրապետության թրիպսների ֆաունան: Ժամանակակից կարգաբանական չափորոշիչների հիման վրա թարմացվել և ամբողջացվել է Հայաստանի թրիպսների տեսակային ցանկը, մասնավորապես, հայտնաբերվել է Հայաստանի ֆաունայի համար 34 նոր տեսակ: Բացահայտվել են թրիպսների սննդային մասնագիտացումները բնական և ագրոէկոհամակարգերում, երեք տեսակի համար արձանագրվել են նոր տեր բույսեր: Առաջին անգամ մանրամասն ուսումնասիրվել է թրիպսների կարանտինային և տնտեսապես կարևոր տեսակների տարածվածությունը Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում:

Իրականացվել է կարանտինային վնասատու *F. occidentalis* տեսակի ձևաբանական և մոլեկուլային-գենետիկական ուսումնասիրություն:

Աշխատանքի գործնական նշանակությունը

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել Հայաստանի գյուղատնտեսության և վնասատուների կառավարման ոլորտներում: Ստացված տվյալները հիմք կհանդիսանան գյուղատնտեսական մշակաբույսերի պաշտպանության, վնասատուների տարածման կանխատեսման և վնասակար ու օգտակար թրիպսների տարբերակման համար: Դրանք կարող են նպաստել բաց և փակ գրունտերում թիրախավորված վերահսկման, ինչպես նաև վնասատուների ինտեգրացված և կենսաբանական կառավարման միջոցառումների մշակմանը: Արդյունքները կարող են կիրառվել նաև համապատասխան բուհական դասընթացներում:

Ատենախոսության կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 4 գլուխներից, եզրակացություններից և 84 հղում պարունակող գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը 170 էջ է: Ատենախոսությունը պարունակում է 54 նկար, 3 գծանկար և 7 աղյուսակ:

Ատենախոսության բովանդակությունը

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են աշխատանքի նպատակն ու խնդիրները, ներկայացված են գիտական նորույթը, կիրառական նշանակությունն ու հիմնական գիտական դրույթները:

Ատենախոսության առաջին գլխում տրվում է գրական ակնարկ թրիպսների կարգաբանական, ձևաբանական և էկոլոգիական առանձնահատկությունների վերաբերյալ:

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է նյութին և ուսումնասիրության մեթոդներին: Ուսումնասիրությունները կատարվել են 2021–2025 թթ. ընկած ժամանակահատվածում Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի Կենդանաբանության ինստիտուտի միջատաբանության և բնահողի կենդանաբանության լաբորատորիայում: Նյութի հավաքը և դաշտային դիտարկումները իրականացվել են ՀՀ բոլոր մարզերում, այդ թվում՝ Երևանում: Հայցորդը կիրառել է ինչպես կենդանաբանության մեջ ընդունված ավանդական մեթոդները, այնպես էլ ժամանակակից մոտեցումներ:

Ատենախոսության երրորդ և չորրորդ գլուխները նվիրված են սեփական ուսումնասիրություններին՝ Հայաստանի թրիպսների տեսակային կազմին և տարածվածությանն ու կիրառական նշանակությանը:

Ուսումնասիրությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությանում հեղինակը կողմից գրանցվել է 54 տեսակի թրիպս, որոնցից **34**-ը առաջին անգամ են նշվում հանրապետության տարածքից:

Ատենախոսությունում ներկայացված են բոլոր 54 տեսակների բնութագրական ակնարկները, որտեղ նշվում են տվյալ տեսակի կարգաբանական դիրքը /ենթակարգի,

ընտանիքի, ենթաընտանիքի, ցեղի և տեսակի անվանումները/, տեսակի հոմանիշները, նյութի ձեռքբերման տվյալները /վայրը, տեր բույսը, որից հավաքվել են տվյալ տեսակի առանձնյակները, հավաքման օրը, ամիսը, տարեթիվը, սեռը, քանակը/, այլ երկրներում նշված տեր բույսերը, տարածվածությունը աշխարհում և Հայաստանում, ձևաբանական առանձնահատկությունները:

Հետազոտությունների արդյունքում ստացված տվյալների հիման վրա հեղինակը կատարել է նյութին համապատասխանող և խնդիրներից տրամաբանորեն բխող եզրակացություններ:

Ատենախոսությունը ձևակերպված է ծավալուն փաստացի նյութերի հիման վրա, շարադրված է գրական լեզվով, բովանդակային առումով կազմված է նրա առանձին բաժինների միջև տրամաբանորեն փոխկապակցված սկզբունքով:

Աշխատանքը կատարված է մեթոդապես բարձր մակարդակով: Ստացված փորձարարական աշխատանքների արդյունքները համոզիչ են և կասկած չեն հարուցում: Ատենախոսության արդյունքներն արտացոլված են ՄԳՇ-ում ներառված 4 գիտական հրապարակումներում և լիովին արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Ատենախոսության սեղմագիրը լիովին արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը և դրույթները: Այն կազմված է ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի պահանջներին համապատասխան:

Հեղինակին հաջողվել է իրականացնել աշխատանքի նպատակը և լուծել իր առջև դրված խնդիրները: Ատենախոսության արդյունքները համալրում են Հայաստանի կենսաբազմազանության վերաբերյալ եղած տվյալները և կարող են հիմք հանդիսանալ այս խմբի հետագա բազմաբնույթ հետազոտությունների համար:

Չնայած ծավալուն և բովանդակալից հետաքրքիր վերլուծությանն ու արդյունքներին, տվյալ աշխատանքը զերծ չէ թերություններից:

Դիտողություններ և առաջարկություններ ատենածոության վերաբերյալ

1. Եզրակացություններ բաժնում նշվում է, որ թրիպսները հանդիպել են Հայաստանի բոլոր լանդշաֆտներում, սակայն ատենախոսության մեջ չի ներկայացվում Հայաստանի լանդշաֆտների դասակարգումը:
2. Սեփական արդյունքներ բաժնում թրիպսների որոշ տեսակներ որոշվել են միայն մինչև ցեղ: Նույնը վերաբերում է նաև տեր-բույսերի որոշ տեսակներին: Ցանկալի կլինի հետագա աշխատանքի ընթացքում կատարել ստույգ տեսակորոշում:
3. Պարզ չէ, թե ինչու՞ մոլեկուլային-գենետիկական և մանրամասն մորֆոմետրիկ ուսումնասիրություններն իրականացվել են միայն մեկ կարանտինային վնասակար տեսակի համար(*Frankliniella occidentalis*), այն դեպքում, որ՝ առկա է ևս մեկ (*Frankliniella schultzei*) կարանտինային տեսակ:
4. Ատենախոսության բովանդակության, աղյուսակների և տաքսոնոմիական ցանկերի տարբեր հատվածներում հեղինակների ազգանունների գրության մեջ առկա են մի շարք

վրիպումներ: Մասնավորապես, հանդիպում են հետևյալ ձևերը՝ «Bagnal»՝ Bagnall-ի փոխարեն, «Bengall»՝ Bagnall-ի փոխարեն, «Linneaeus»՝ Linnaeus-ի փոխարեն:

Ատենախոսության տեքստում կան նաև այլ տառասխալներ և անհաջող ձևակերպումներ:

Նշված դիտարկումներն ու բացթողումները չեն արժեզրկում ատենախոսության գիտական և գործնական նշանակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մարգարիտ Արթուրի Տիգանյանի «Հայաստանի Հանրապետության թրիփսների (Insecta, Thysanoptera) ֆաունան և էկոլոգիական առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունը փաստացի նյութի ծավալով, արդիականությամբ, գիտական նորույթով, տեսական և գործնական նշանակությամբ համապատասխանում է ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին, իսկ հեղինակը՝ Մարգարիտ Արթուրի Տիգրանյանը, արժանի է Գ.00.08՝ «Կենդանաբանություն. մակաբուծաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
կենս. գիտ. թեկնածու Ս. Հ. Հակոբյան

«Կենս. գիտ. թեկնածու Ս.Հ.Հակոբյանի
Ստորագրության իսկությունը հաստատում եմ»
Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի
գիտական կենտրոնի գիտքարտուղար, կ.գ.թ. Հ. Գ. Խաչատրյան

24.08.2026